

ՀԻՍՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 1

ԲՆԱԳԻՐՆԵՐ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ

№ 1

Թ Է Ո Վ Ն Ե Ա Յ

Յ Ա Ղ Ա Գ Ս

ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆՑ

ՀԱՆԴԵՐՁ ՅՈՅՆ ԲՆԱԳՐԱԻ

Ս. Ե խ ա ռ ու ր յ ու մ ք

Պրոֆ. ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԴՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1938

132

THEONIS PROGYMNASMATA

[περὶ ῥητορικῶν γυμνασμάτων]

armeniace et graece

edidit

Prof. Dr. AGOP MANANDIAN

808.5

p-45

ԹԵՈՎՆԵԱՅ

ՅԱՂԱԳՍ ՀԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆՑ

Ս. Շխանյանի թարգմ.

Պրաֆ. ՀԱՅՈՒՄ ՄԱՆԱՆԳՅԱՆԻ

1931



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՅԿԱՍՏԱՆԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ



Գրադատական

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ

6689



4948

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ

... անհատական պատճառներով ...

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1. Թեոնի այս գրվածքի հայերեն հին թարգմանություն միակ ձեռագիրը գտնվում է Հայկ. ԽՍՀ պետական կենտրոնական թանգարանում: Այդ թարգմանության վրա առաջին անգամ ուղղորդություն է դարձրել Ն. Ակիրյանը:

1934 թվին «Հանդես Ամսօրեայ»-ի մայիս-հունիս (թ. 5-7) համարում Ն. Ակիրյանը հրատարակել էր ընդարձակ մի հոդված՝ «Թեոնեայ, Յաղագս ճարտասանական կրթութեանց», վորի մեջ նա համեմատել էր Թեոնի հունարեն բնագրի վերնագրերն իր գտած հայերեն թարգմանության վերնագրերի հետ և ցույց էր տվել, վոր Պետական թանգարանի վերոհիշյալ № 870 883 ձեռագրի մեջ պահպանված «Տոնականի, Յաղագս ճարտասանական կրթութեանց» գրվածքը համապատասխանում է Թեոնի ճարտասանական հայտնի աշխատության, տես Theonis progymnasmata— Rhetores graeci, Bibl. Teubn., ed. L. Spengel, vol. II, Lipsiae 1854, էջ 59—130, կամ նաև այլ հրատարակություններ՝ Ch. Walz, Rhetores graeci, vol. I., Stuttgart 1832, էջ 145—256, և առանձին հրատարակությամբ՝ E. Finkh, Stuttgart 1834:

2. Թեոնի հունարեն այս աշխատությունը յեղել է ճարտասանական վարժությունների գործնական մի ձեռնարկ, վորը ինչպես հնագույն դարերի հեռոտրական նման յերկերը՝ ճարտասանական արվեստի ուսման հետ միասին պարունակել է իր մեջ մասամբ նաև քերականություն և վոճարանություն: Գիտական նորագույն ուսումնասիրությունների համաձայն՝ Թեոնի այս գիրքը, վորը հունարեն բնագրում կոչվում է «Նախակրթությունը» (Προγυμνάσματα),

իսկ հայերեն թարգմանութեան մեջ՝ «Յաղագս ճարտասանական կրթութեանց», ամենահինն է մեր ձեռքը հասած «Նախակրթութեանց»-ից և անհամեմատ ավելի լրջմիտ ու արժեքավոր աշխատութեան է, քան հետագայում կազմված ձևամոլական ու սքոլաստիկական նման յերկերը: Ուշագրավ է սակայն, վոր Հայաստանում ավելի հայտնի ու ավելի տարածված է յեղել վնչ այնքան թեոնի «Նախակրթութեանց» հին թարգմանութեանը, վորքան Ափթնիսոսի «Նախակրթութեանց»-ից քաղված ու թարգմանված ճարտասանական տեսութեանները և վարժութեանները, վորոնք հիմնական մասն են կազմում Մովսես քերզողին վերագրված «Յաղագս պիտոյից» գրքի (տես «Մովսեսի Սորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ 1843, էջ 341—581): Այս վերջին «Նախակրթութեանց», վոր հորինել էր Ափթնիսոսը 4-րդ դարում իբրև ճարտասանութեան տարրական դասագիրք, շնորհիվ իրանց պարզութեան ու մատչելիութեան՝ անասնման գերակշռութեան էյին ձեռք բերել նաև բյուզանդական գրականութեան մեջ միջին դարերում:

3. «Յաղագս ճարտասանական կրթութեանց» գրվածքի հեղինակի մասին մեր ունեցած տեղեկութեանները խիստ անբավարար են ու կցկտուր: Բյուզանդական միայն շրջանում, տասերորդ դարում, յերկու Աղեքսանդրացի թեոնների մասին մի քանի վկայութեաններ մեջ են բերված Սուրբ դասի բառարանի հետևյալ հատվածներում (թեոն անվան տակ).

ա) «Թեոն Աղեքսանդրացի՝ ստոյիկյան փիլիսոփա. ապրել է Ոգոստոսի ժամանակ Առիոնից հետո. գրել է մեկնութեան ընախոսական ներածութեանն Ապոլլոնգորի և ճարտասանական արվեստների մասին գ. գիրք».
բ) «Թեոն Աղեքսանդրացի՝ սոփիստես, վորի անունն էր Ելիոս. գրել է արվեստ նախակրթութեանց, մեկնութեան Քսենոփոնի, Իսոկրատի, Դեմոսթենեսի, ճարտասանական տարրերք, հետախուզումներ խոսքի կազմութեան մասին և ուրիշ շատ աշխատութեաններ»:

Սուրբասը, ինչպես պարզ յերևում է նրա այս վկայու-

թեոններից, գիտե յերկու Աղեքսանդրացի թեոն. մեկը՝ ստոյիկյան փիլիսոփան, իսկ մյուսը՝ սոփիստեսը, վորի անունն էր Ելիոս թեոն: Մյուսիցից առաջինը ժամանակակից է յեղել ըստ Սուրբասի Ոգոստոս կայսեր (31 մեր թվ. առաջ—14 մեր թվ. հ.) և, ինչպես յենթադրում են, յեղել է վարիչ Աղեքսանդրյան պարոցի Արիոս Դիդիմոսից հետո և Ապրիոնից առաջ¹: Իսկ յերկրորդի ժամանակը, վորը ճարտասանական «Նախակրթութեանց» հեղինակն է, մնում է անորոշ և ղեռն չէ լուսաբանված հաստատուն ու վերջնական կերպով:

4. Բանասերներից վոմանք կարծում են, վոր Սուրբասի վերոհիշյալ վկայութեաններում հիշված թեոնները միևնույն անձն են:

Թեոն սոփիստեսի նույնութեանը համանուն ստոյիկյան փիլիսոփայի հետ նրանք հավանական են համարում, վորովհետև հռոմեական հուշակավոր մանկավարժ Կվինտիլիանը, ոգտվելով իր Institutiones oratoriae գրվածքի մեջ թեոնի նախակրթութեաններից՝ անվանում է նրան թեոն (III, 6, 48) կամ նաև թեոն Ստոյիկյան (IX, 3, 76)²: Բացի այդ՝ գերմանական բանասեր Ռեյխելը, հիմնվելով նախակրթութեանների առանձին դատողութեանների և արտասանութեանների վրա՝ փորձել է ապացուցել, վոր Ելիոս թեոնը յեղել է, հավանորեն, հետևող ստոյիկյան իմաստասիրութեան³:

Վերոհիշյալ թեոններին միևնույն անձն ընդունողները

¹ Ապրիոն անվան տակ Սուրբասը վկայում է, վոր սա «յեղել է թեոն գրամատիկոսի հաջորդը»: Այս վկայութեանից ետևցնում են վոր թեոն գրամատիկոսը և թեոն ստոյիկյան փիլիսոփան միևնույն անձն են:

² Տես Ալիքսյան, Հանդ. Ամս. 1934, էջ 199. հմտտե G. Thiele, Herma-goras, Strassburg 1893, էջ 5, ծ. 1: Կվինտիլիանի 1829 թվի հրատարակութեան մեջ մենք չգտանք թեոն Ստոյիկյանի հիշատակութեանը վերև մատնանշված յերկրորդ հատվածում. հմտտե M. Fabii Quintiliani, De institutione oratoria libri XII, T. II, Lipsiae 1829, էջ 147—148:

³ Տես G. Reichel, Quaestiones progymnasticae, Leipzig 1909. էջ 24 են:

յենթադրում են, բնականաբար, վոր Նախակրթությանց հեղինակ Ելիոս Թեոնը ապրել է, ինչպես վկայում է Սուրբաբար, Ոգոստոս կայսեր ժամանակաշրջանում և յեղել է Ազեքսանդրյան դպրոցի վարիչ Արիոս Դիոգենիսից հետո, վորը, ինչպես հայտնի յե, Ոգոստոսի ուսուցիչն էր և Մեկենասի բարեկամը:

5. Տարբեր կարծիքի յեն Ելիոս Թեոնի ժամանակի մասին Վիրամովիցը և Սրբաբար:

Նախակրթությանց հեղինակի ժամանակը Վիրամովիցը գնում է Կալիգուլիայի (37—41 մեր թ. հ.) ժամանակակից Ապիոն գրամատիկոսից հետո, վորի անունը, նրա յենթադրությամբ, հիշատակված է Ելիոս Թեոնի գրվածքում: Նախակրթությանց մեջ «ἐκ τῶν Ἀριστοῦ ἀλέγχαγ» (հայերենում՝ «Առիոնայ յանդիմանութեանցն») նա առաջարկում է ուղղել և կարդալ փոխանակ Ἀριστοῦ Ἀπλωος, «Ապիոնայ»¹: Այս ուղղումը դժվար է սակայն ընդունել, վորովհետև հայերեն հին թարգմանության մեջ ևս ունենք «Առիոնոս» կամ «Առիոնա»² ընթերցվածը, վորը համապատասխանում է հունարեն բնագրի Ἀριστοῦ Ἀπλωος ընթերցվածին:

Անկախ Վիրամովիցի յենթադրությունից, վորը, ինչպես տեսնում ենք, չէ հաստատվում, — Թեոնի ժամանակը վորոշվում է հենց առաջին դարում (մեր թվ. հ.)՝ Ոգոստոսի և Տիբերիոսի ժամանակակից հեղինակներից՝ Անտիփիլոսից, Դիոնիսիոս Հադիլաուսացուց և Թեոփորոս Գադարացուց հետո, վորոնց գրական յերկերը հիշատակված են Ելիոս Թեոնի գրվածքում: Նախակրթությանց բովանդակությունը ևս՝ նրա արձարժված մտքերը և նրա վոճն ու արտաբերին ձևա-

¹ Տես Wilamowitz-Möllendorff, *Asianismus und Atticismus*, *Hermes* 35, 1900, էջ 6—7:

² Հայերեն թարգմանությունն ունի «առ ի նոս» ընթերցվածը, վորը յուսուցնում ուղղված է «Առիոնա»: Ահինյանը կարծում է, վոր հայերենում պահպանում են թե Առիոնի մասին հատվածը և թե՛ Նախակրթությանց ամբողջ Ձ. գլուխը (տես Հանդ. Ամս. 1934, էջ 199, ծանոթ): Սակայն, իրապես, անհարազատ համարված ամբողջ այդ գլուխը գտնվում է «Յաղագս պատմության» գլխի վերջում:

վորումը՝ հիմք են տալիս դարձյալ յենթադրելու, վոր Ելիոս Թեոնն ապրած պիտի լինի, իրոք, դասական մատենագրության վերջին այս շրջանում:

Սրբաբարի «Հունաց գրականության պատմության» մեջ Ելիոս Թեոնի ժամանակը ցույց է տրված առաջին դարի վերջերում կամ յերկրորդ դարի սկզբում¹. սակայն հազիվ թե կարելի լինի նրա ժամանակն այդքան առաջ տանել: Արդեն առաջին դարի վերջերում Նախակրթություններից հավանորեն ոգտվել էր, ինչպես վերև տեսանք, Կվինտիլյանն իր *Institutiones oratoriae* գրվածքում:

6. Թեոնի Նախակրթությունների այժմյան հունարեն բնագիրը, ինչպես միանգամայն ձիշտ նկատել են գերմանական գիտնականները, մեզ չէ հասել իր սկզբնական ձևով: Բնագրի վերջում պակասում են չորս կամ հինգ գլուխ. բացի այդ՝ պահպանված գլուխները տեղափոխված ու յետ և առաջ են դասավորված, իսկ վերջին 13-րդ գլխում (*περὶ νόμου*) դուրս է ընկած կեսից ավելին: Գլուխների տեղափոխությունները կատարված են հունարենում հատուկ նպատակով, վորպեսզի Թեոնի Նախակրթությունները համաձայնեն ըստ ձևի Հերմոգենեսի և Ափիոնիոսի Նախակրթությունների գլխակարգություններին և համապատասխանեն ճարտասանական վարժությունների այն նոր շապրոնային դասավորությանը, վորը սովորական էր ու ընդունված հետնագույն դարերում:

Հունարեն սկզբնագրի նախկին գլխակարգությունները, վոր յենթադրաբար փորձել էր վորոշել ու ճշտել գերմանական գիտնականներից, գլխավորապես, Ռեյխելը², հաստատուն կերպով և ըստ ամենայնի համաձայն Ռեյխելի կուսուցների տալիս է այժմ հայերեն թարգմանությունը, վորը ներկայացնում է մեզ Թեոնի հունարեն բնագիրը համեմատաբար իր հին անաղարտ վիճակում:

¹ Wilhelm von Christ's *Geschichte der griechischen Literatur*, II, München 1920, էջ 460:

² Տես G. Rhetchel, *Quaestiones progymnasticae*, Diss., Leipzig 1909.

Շատ պարզ է, ուրեմն, վոր Նախալրթությանց հունարեն բնագրի վերականգնման ու վերահրատարակության համար հայերենը ունենալու յե բացառիկ մեծ կարևորություն:

7. Թեոնի հունարեն ձեռագիր որինակներում, ինչպես և ապագիր հրատարակության մեջ (տես Spengel, Leipzig 1854), գլուխները դասավորված են համաձայն Հերմոգենյան գլխակարգության հետևյալ հաջորդականությամբ.

1. Առաջարան, προσίμιον.
2. Սերի տից տօն յեօն ձրօրից (Յաղագս մանկանց վարժման).
3. Սերի մնծօս (Յաղագս առասպելի).
4. Սերի ճիղղիլառօս (Յաղագս պատմութեան).
5. Սերի չրեւազ (Յաղագս պիտոյից).
6. Սերի տօքօս (Յաղագս տեղոյ).
7. Սերի ձրաքօմիօս և քօքօս (Յաղագս ներբողենի և պարսաւանացն).
8. Սերի սրղրօսեօս (Յաղագս բաղդատութեան).
9. Սերի քրօսօքօքօւազ (Յաղագս դիմառնութեան).
10. Սերի ձքքրօսեօս (Յաղագս արտասանութեան).
11. Սերի մեօսեօս (Յաղագս դրութեան).
12. Սերի յօքօս (Յաղագս օրինաց):

Իսկ հայերենը, վորը համապատասխանում է Թեոնի հունարեն սկզբնագրին, ունի գլուխների հետևյալ դասավորությունը.

- Ա. Առաջարան (προσίμιον).
- Բ. Յաղագս մանկանց վարժման (Սերի տից տօն յեօն ձրօրից).
- Գ. Յաղագս պիտոյիցն (Սերի չրեւազ).
- Դ. Յաղագս առասպելի (Սերի մնծօս).
- Ե. Յաղագս պատմութեան (Սերի ճիղղիլառօս).
- Զ. Յաղագս տեղոյ (Սերի տօքօս).
- Է. Յաղագս արտասանութեան (Սերի ձքքրօսեօս).
- Ը. Յաղագս դիմառնութեան (Սերի քրօսօքօւազ).
- Թ. Յաղագս ներբողենի և պարսաւանացն (Սերի ձրաքօմիօս և քօքօս).

Ժ. Յաղագս բաղդատութեան (Սերի սրղրօսեօս).

ԺԱ. Յաղագս դրութեան (Սերի մեօսեօս).

ԺԲ. Յաղագս օրինաց (Սերի յօքօս).

ԺԳ. Յաղագս վերձանութեան և վերձանման (Սերի ձրօրից և ձրօրից և ձրօրից).

ԺԴ. Յաղագս լսելութեան (Սերի ձքքրօսեօս).

ԺԵ. Յաղագս տարասութեան (Սերի քրօսօքօւազ).

ԺԶ. Յաղագս արտագործութեան (Սերի ձքքրօսեօս):

Հայերեն թարգմանությունն ու այժմյան հունարենը բաղդատելով իրար հետ՝ ստանում ենք, ուրեմն, գլուխների դասավորության համեմատական հետևյալ պատկերը.

Ա. Առաջարան = 1. προσίμιον, Բ. = 2, Գ. = 5, Դ. = 3, Ե. = 4, Զ. = 6, Է. = 10, Ը. = 9, Թ. = 7, Ժ. = 8, ԺԱ. = 11, ԺԲ. = 12, ԺԳ., ԺԴ., ԺԵ., ԺԶ. = հունարենում չիք:

8. Հայերեն թարգմանության մեջ պահպանված են, ինչպես տեսնում ենք՝ հունարեն սկզբնագրի նաև վերջին գլուխները՝

ԺԳ. Յաղագս վերձանութեան և վերձանման (Սերի ձրօրից և ձրօրից և ձրօրից).

ԺԴ. Յաղագս լսելութեան (Սերի ձքքրօսեօս).

ԺԵ. Յաղագս տարասութեան (Սերի քրօսօքօւազ) և

ԺԶ. Յաղագս արտագործութեան (Սերի ձքքրօսեօս):

Վերոհիշյալ իր ուսումնասիրության մեջ Ռեյխելը մասնաձևի է արել, վոր այժմյան հունարենում բացի այս չորս գլուխներից պակասում է մի գլուխ և՛ Սերի ձրօրից (Յաղագս հակաձուութեան): Վորովհետև այս գլուխը չկա նաև հայերեն թարգմանության մեջ՝ Ն. Ակիբյանը Ռեյխելի յենթադրությունը համարում է անհավանական (Հանդ. Ամս. 1934, էջ 201):

Ուշագրավ է սակայն, վոր Եջմիածնի 1223 թվի № 2093 (= Մայր Յուզակ № 2050) ձեռագրի վերջում (թ. 200—204) գտնվում է ճարտասանական վարժությունների մի համառոտագրություն («Գլուխ ճարտասանութեան ի Պրատոնէ՛ բանաստեղծութեամբ գրամարտ շարագրաց»), վորի մեջ հի-

շատակված և անթրոփոս — հակաճառությունը հետևյալ հատվածում՝

«Քրուխ հակաճառութեան նախերգական:— Անհաւաստարագոյն, անկարողագոյն, անհաւանադոյն, անճշմարտագոյն, անծայրաժապաւորագոյն (*), մեղկագոյն, անյայտագոյն, ինքնամարտագոյն, տաքաւրինագոյն, անվայելչագոյն, անբարեձևագոյն, անաւգտակարագոյն, հաւաշըջագոյն(*), անդասագոյն, անկերպագոյն, ի վերա բանին կազմութե»:

Համառոտագրութեան հեղինակը, ինչպէս յերևում է «պատմութեան», «աւրինաւորութեան», «վերծանութեան», «արտագործութեան» և «տարասութեան» վերաբերյալ հատվածներէց, ոգտված պիտի լինե՞ր բացի Պիտոյից գրքից նաև Թեոնի հայերէն թարգմանությունից: Իմ կարծիքով, «հակաճառութեան» վերաբերյալ վերև մեջ բերված հատվածը կարող է նույնպէս ընդունվել իբրև ուշագրութեան արժանի մի վկայութիւն և ակնարկ, վոր Թեոնի հայերէն թարգմանութեան հին որինակը, վորից ոգտվել էր ճարտասանական համառոտագրութեան հեղինակը, կարող էր ունեցած լինել «Յաղագս հակաճառութեան» (Սերլ անթրոփոս) ԺԷ գլուխը, վորը պակասում է Թեոնի թարգմանութեան Երևանի Թ. 870 ձեռագրում:

Այս յենթագրութիւնն անհավանական չէ, վորովհետև անթրոփոս — «հակաճառութիւն»-ը, ինչպէս և Թեոնի հայերէն թարգմանութեան վերոհիշյալ ԺԳ.— ԺԶ. գլուխները, չկան Հերմոգենյան-Ափթոնյան Նախակրթութիւններում և կարող է լին ծանոթ լինել հայ մասենագիրներին, հավանորեն, Թեոնի գրվածքից:

9. Թեոնի գիրքը հունարէն բնագրում կոչվում է, ինչպէս ասացինք, Προϋμνάσματα «Նախակրթութիւնք»: Սուեղասի մոտ նույն այս աշխատութիւնն անվանված է «Արուեստ յաղագս նախակրթութեանց» (Τέχνη περί προϋμνάσματα): Իսկ հայերէն թարգմանութեան մեջ նրա վերնագիրը, ինչպէս տեսանք, բոլորովին տարբեր է՝ «Յաղագս ճարտասանական կրթութեանց»:

Վերն է այս վերնագրերից հինը:

Ն. Ակինյանը հին և համարում հունարէնի Προϋμνάσματα «Նախակրթութիւնք» վերնագիրը: Նրա կարծիքով՝ «Յաղագս ճարտասանական կրթութեանց» թարգմանութիւնն է հունարէն «Περί προϋμνάσματα» վերնագրի, իսկ «Նախակրթութիւնք», նրա ասելով, «հիներուն անձանօթ է προϋμνάσματα իմաստով» (տես Հանդ. Ամս. 1934, էջ 204):

Այս կարծիքը, ինձ թվում է, առարկելի չէ և վիճելի: Προϋμνάσματα բառը «նախակրթակ» է թարգմանել հենց ինքը Թեոնի թարգմանիչը նախաբանի հետևյալ հատվածում՝

«Եւ գղասունն ըթին նախակրթակացն այսպէս արասցուք. նախ առաջին՝ ի պիտացն, զի սուզ է և զիւրայուշ, և ապ՝ հետո՝ նառասպելէն և պատմութեանէն»:

Միանգամայն հավանական է, ուրեմն, վոր թարգմանիչը հունարէն Προϋμνάσματα վերնագիրը կը թարգմաներ «Նախակրթակք», իսկ Περί προϋμνάσματα՝ «Յաղագս նախակրթակաց»:

Հայերէն թարգմանութեան մեջ պահպանված է ըստ իս Թեոնի գրվածքի հին իսկական վերնագիրը: Ուրեմն՝ համաձայն հայերէն թարգմանութեան Թեոնի ճարտասանութեան հունարէն հին վերնագիրը կարող էր յեղած լինել սկզբնագրում վնչ թե Προϋμνάσματα «Նախակրթութիւնք» կամ Περί προϋμνάσματα «Յաղագս նախակրթութեանց», այլ Περί ρητορικῶν γυμνασμάτων «Յաղագս ճարտասանական կրթութեանց»:

10. Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» այս գրվածքը, ինչպէս և Դիոնիսիոս Թրակացու քերականութիւնը, Փիլոնը, Պիտոյից գիրքը, Արիստոտելի իմաստասիրական յիբիկն ու նրանց մեկնութիւնները, այն հին Հունաբան Դպրոցի արտագրութիւններիցն է, վորի ծագումը, ժամանակը և զարգացման շրջանները մանրամասն ուսումնասիրված են իմ նախորդ աշխատութիւններից մեկում (տես Հունաբան Դպրոցը և նրա զարգացման շրջանները, Ազգ. մատեն. ՃԺԹ, Վիեննա 1928):

Թարգմանութիւնը կատարված է նյութական տառացի փոխադրութեան յեղանակով, բոլորովին հունարենի համեմատ՝ հունարան բառակազմութեամբ և հույն լեզվի համաձայնութեամբ:

Ինչպես և մյուս հունարան թարգմանութիւնները՝ այս գրվածքը ևս ունի լեզվական ու քերականական բնորոշ առանձնահատկութիւններ, վորոնք հնարավորութիւն են տալիս վորոշելու նրա կապակցութիւնը հունարան թարգմանութիւնների այն խմբերից վորակ մեկի հետ՝ վորոնց ժամանակը լուսարանված է վերոհիշյալ իմ ուսումնասիրութեան մեջ:

Ըստ իր լեզվի Թեոնի հայերեն թարգմանութիւնը խմբակից է, իմ կարծիքով, վոր թե Գիոնիսիոս Թրակացու քերականութեան թարգմանութեան հետ, ինչպես յենթագրում է Ալիւսյանը (Հանդ. Ամս. 1934, էջ 204), այլ հունարան թարգմանութիւնների յերկրորդ խմբի հետ, վորին պատկանում են հետևյալ յերկերը.

- ա. «Հակաճառութիւն Տիմոթէոս Էլուբոսի».
- բ. «Ներածութիւն Պորփիրի».
- գ. «Ստորգութիւնք Արիստոտէլի».
- դ. «Պերիարմէնիաս կամ Յաղագս մեկնութեան Արիստոտէլի».
- ե. «Մեկնութիւն Ստորագութեանցն Յամբլիքոսի».
- զ. «Մեկնութիւն Պերիարմէնիաս գրոցն Յամբլիքոսի»:

Այս յերկերը, ինչպես մանրամասն ցույց է տրված վերոհիշյալ իմ ուսումնասիրութեան մեջ (տես «Յունարան գրաւորոցը և նրա գարգացման շրջանները», էջ 95—102 և 124—142), թարգմանված են վեցերորդ դարի յերկրորդ կիսում հակաքաղքեղոնական միաբնակների միջովայրում: 552—564 թվականների ժամանակամիջոցում թարգմանված էր Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւն»-ը, իսկ հույն դարի յոթանասական թվականներին Հովհաննէս կաթողիկոս Գաբեղինացու հրամանով թարգմանվել է յին «Արիստոտէլի Ստորգութիւնք»-ը, «Պերիարմէնիաս»-ը և Յամբլիկոսի մեկ-

նութիւնները¹, վորոնք սխալմամբ վերագրվել են Դավիթ Անհաղթին: Հենց հույն այս ժամանակաշրջանում, այսինքն՝ վեցերորդ դարի յերկրորդ կիսում՝ թարգմանված պիտի լինի նաև Թեոնի յերկը:

Ժամանակի այս վորոշմանը հիմք են ծառայում լեզվական ու քերականական ներքև մեջ բերված դիտողութիւնները, վոր թվում են ինձ ուշագրավ ու կարևոր:

11. Թեոնի թարգմանիչը ծանոթ է յիդի, ինչպես և յերկրորդ խմբի վերոհիշյալ մյուս յերկերի թարգմանիչները, Թրակացու քերականութեան և թերևս նաև Փիլոնի և Պիտոյից գրքի թարգմանութիւններին, և ճարտասանական ու քերականական ընդհանուր տերմինները և Փիլոնյան հատուկ բառերը ծագում են այս թարգմանութեան մեջ ևս, հավանորեն, հունարան առաջին խմբի հնագույն թարգմանութիւններից: Այսպիսի տերմիններ և բառեր են.

- 1. Այլափոխութիւն, այլափոխեմ μετἀληψις, μεταλαμβάνω, μεταβάλλω, ἐναλλάττω 26. 40. 42. 44. 60. 84. 181. Փիլ. լին. 128. 163. 285. Փիլ. Սամփս. 560.²
- 2. անցեալ [ժամանակ] παρελήλυθῶς [χρόνος] 68. Թրակ. քեր. 23. Պիտ. 407. Արիստ. պերիարմ. 494. Յամբլ. պերիարմ. 538.

¹ Յամբլիկյան այս խմբի իմաստասիրական թարգմանութիւններին է վերաբերում «Հակաց գրքի» հայանի հիշատակարանը (տես «Յունարան գրաւորոցը», էջ 136—142): Ալիւսյանը յենթագրում է (տես «Դասական հայերէն և Վիեննական Միթթարեան գրաւորոցը», Վիեննա 1932, էջ 117), վոր «Հակաց գրքը» անվան տակ պետք է հասկանալ այն «Իմաստասիրական մանր գրութեաներու հաւաքածոյքը, որ պահպանուած է հական մասով Էջմիածնի Չեռագրատան նոր ժող. Թ. 528 ձեռագրին մէջ, յամբ 1280»: Սակայն նրա մատնացույց տրած այս գրութիւնը հունարան առանձին թարգմանութիւն չէ, այլ հարց ու պատասխաններ են, քաղված և կազմված իմաստասիրական հայ թարգմանութիւններից:

² Համեմատած բառերը տես հետևյալ հրատարակութիւններում. ա. Ն. Ադոնց, «Արուեստ Գիոնիսեայ քերականի», Պետրոգրադ 1915. բ. Փիլոն Երբայցի, Հ. Մ. Ավգերյանի 1822 և 1826 թ.թ. հրատարակութիւնները, նաև Փիլոնի ձեռքերի 1892 թվի հրատարակութիւնը. գ. Մովսէսի Պորենացույ մատենագրութիւնք, Վիեննայի 1843 («Յաղագս պի-

3. ապարանեմ, ապարանութիւնն անպաշտօն, անպաշտօն 26.
28. 136. Փիլ. նիւ. բ. 74. Փիլ. լին. 47. 297. Փիլ.
Հիւս. 161. Փիլ. Մամիս. 564. Իրեն. հերձ. 105. 106.
Տիմ. Կուզ 16. 225.

4. ապասեմ 6. ապաստեցի Արիստ. պերիարմ. 466. 511.
ապաստութիւն թր. քեր. 33. Արիստ. ստորագ. 397.
429.

5. ապացուցանեմ, ապացոյց, ապացուցորէն անպատեհութիւն,
անպատեհութիւն, անպատեհութիւն 14. 40. 108. ապացուցանեմ
Իրեն. հերձ. 46. 213. Տիմ. Կուզ 84. 139. Յամբլ.
պերիարմ. 511. ապացոյց Փիլ. նիւ. ա. 29. Իրեն.
հերձ. 23. 150. Իրեն. ցոյցք 1. Տիմ. Կուզ 168. ա-
պացուցական Փիլ. Հիւս. 147. Արիստ. ստոր. 446.
Յամբլ. ստոր. 447. Յամբլ. պերիարմ. 487. ապացու-
թիւն Տիմ. Կուզ 22. 294.

6. ապերկեցուցանեմ անպատեհ 10. 112. 182. ապերկու-
թիւն անպատեհ թր. քեր. 33. տես նաև «բացիրե-
ցուցանեմ».

7. առանկանիմ անպատեհ 10. Փիլ. նիւ. բ. 92. Փիլ. լին.

8. առաջարան անպատեհ 108. 110. առաջարանի Իրեն.
հերձ. 162. յառաջարան Պիտ. 386. տես նաև «նս-
խերգան».

9. առաջարեմ, առաջարութիւն անպատեհ, անպատեհ 68.
158. առաջարութիւն Փիլ. լին. 134. 408. Փիլ. ել.
446. Արիստ. ստոր. 393. առաջարեմ Իրեն. հերձ.

40. Յամբլ. ստոր. 417. Յամբլ. պերիարմ. 490. ա-
ռաջարիթ թր. 5. Փիլ. ել. 457.

10. առասեմ, առաստեմ անպատեհ, անպատեհ 88.
92. առասեմ Տիմ. Կուզ 54 կն. Արիստ. ստոր. 359.
386. առաստեմ անպատեհ թր. քեր. 17. 18. 19.

տոյից», եջ 341—581). դ. «Իրենիոսի, Ընդդէմ հերձուածոց», Leipzig
1910 և «Իրենիոսի, Յոյք առաքելական քարոզութեան», Leipzig 1907.
ե. «Տիմոթէոսի եպիսկոպոսակոսի Աղեքսանդրեայ, Հակաճանութիւն»,
հրատ. Կարապետ Տ. վարդապետի և Երվանդ վարդապետի, Եջմիածին
1908 և դ. «Կորին վարդապետի, Մամբլէի վերձանողի եւ Գաթի Ա-
յաղթի մասնագրութիւնը», Վենետիկ 1833.

առաստութիւն անպատեհ թր. քեր. 12. Տիմ. Կուզ
54. Արիստ. ստոր. 368. Յամբլ. ստոր. 411. Յամբլ.
պերիարմ. 497.

11. առարկութիւն, առարկեմ անպատեհ, անպատեհ, անպատեհ
28. 32. 62. 112. 148. 158. առարկութիւն Փիլ. Մամիս.
566. Իրեն. հերձ. 109. Տիմ. Կուզ 149. Յամբլ. պե-
րիարմ. 487. առարկեմ Փիլ. լին. 391. Փիլ. նիւ. բ.
81. Իրեն. հերձ. 8. Արիստ. պեր. 476. 512.

12. առնեմ, առնութիւն անպատեհ, անպատեհ, անպատեհ
36. 46. 131. 184. 185. առնեմ Պիտ. 551. Տիմ.
Կուզ 1 կն. Արիստ. պերիարմ. 474. 475. Յամբլ.
պերիարմ. 493. Ներ. Պորփ. 238. առնութիւն Յամբլ.
պեր. 523.

13. առնանութիւն անպատեհ 166. 181. թր. քեր. 1. 2. 38.

14. առնուածանութիւն անպատեհ 80. առնուածան Պիտ. 414.
Տիմ. Կուզ 135. 286. Փիլ. առնուածանագոյն Փիլ.
այլաբ.

15. արտաբերեմ, արտաբերութիւն անպատեհ, անպատեհ 10. 22.
40. 88. 90. 92. 94. 166. 175. 176. 182. արտաբե-
րեմ թր. քեր. 9. 24. 25. 35. Պիտ. 347. Տիմ. Կուզ
132. Յամբլ. պերիարմ. 491. 521. արտաբերութիւն
Յամբլ. պեր. 491. Յամբլ. ստոր.

16. արտաբերեմ, արտաբերութիւն, արտաբերական անպատեհ,
անպատեհ, [անպատեհ], անպատեհ 22. 32. 54. 60. 62.
68. 110. 156. 175. 181. Պիտ. 470. Տիմ. Կուզ 6.
Յամբլ. ստոր. 451. արտաբերութիւն Պիտ. 374. 386.
Տիմ. 28. Յամբլ. ստոր. 448. արտաբերական Պիտ. 413.

17. արտասանութիւն, արտասանեմ անպատեհ, անպատեհ 6.
16. 22. 32. 62. 116. 118. 120. 180. արտասանի
Պիտ. 529. արտասանութիւն Պիտ. 529. 533. 537 կն.

18. արտասանեմ, արտասանը անպատեհ, անպատեհ 86. արտա-
սանակ Պիտ. 348. արտասանը Տիմ. Կուզ 333.

19. արտաբերութիւն, արտաբերութիւն անպատեհ, անպատեհ 72.
112. 146. 164. 176. Պիտ. 386. Իրեն. հերձ. 200.

20. արտաբերեմ անպատեհ 106. Փիլ. ժ բան և իմաստ. ար-
տաբերանագոյն Փիլ. Հիւս. 157. տես նաև տարբեր.



1231

21. բաղաձայնական συλλογισμός 40. 42. բաղաձայնականք συλλογιστικοί Թր. քեր. 35. 37.
22. բաղաձայնութիւն, բաղաձայն սոյնքրօս, սոյնքրօն 6. 16. 24. 112. 138. 140. 142. 144. բաղաձայնութիւն Թր. քեր. 15. Փիլ. լին. 68. 134. 215. Իրեն. հերձ. 13. 102. 165. Իրեն. ցոյցք 60. Պիտ. 357. բաղաձայնութիւն լին. 412. Իրեն. հերձ. 116. Պիտ. 386.
23. բաղաձայնական անոմալոս 34. Պիտ. 341. բաղաձայնական 34. 46. Պիտ. 342.
24. բաղաձայն անպարզ, անպարզ, 30. 94. բաղաձայնականք բաղաձայնական Պիտ. 356. Տիմ. Կուլ 311. Արիստ. սոտր. 366. 399 ևն. Յամբլ. սոտր. 430. Արիստ. պերիար. 461. Յամբլ. պերիար. 500. տես նաև ապառնիս.
25. բաղաձայնականք, բաղաձայնականք, բաղաձայնականք անօրինակ, անօրինակ, անօրինակ 26. 34. 36. 38. 40. 42. 46. 48. 54. 88. 94. 96. 100. 142. Պիտ. 446. Տիմ. Կուլ 4. 59 ևն. Արիստ. սոտր. 385 ևն. Արիստ. պերիար. 461 ևն. Յամբլ. պերիար. 488. 497 ևն. տես նաև «անօրինականք».
26. գերազանցական, գերազանցականք, գերազանցականք անօրինակ, անօրինակ 78. 132. Փիլ. Էլ. 451. Պիտ. 345. 501. Տիմ. Կուլ 55. 97. Յամբլ. սոտր. 417. 443. 146. Պիտ. 510.
27. գերազանցականք անօրինակ 6. 16. 24. 60. 122. 128. 146. Պիտ. 510.
28. անօրինականք, անօրինականք անօրինակ, անօրինակ 52. 176. Թր. քեր. 2.
29. անօրինականք անօրինակ 76. Թր. քեր. 38.
30. անօրինականք անօրինակ 38. Փիլ. Էլ. 520.
31. անօրինականք անօրինակ 4. Թր. քեր. 16. Փիլ. Սամբլ. 557. տես նաև «անօրինականք».
32. անօրինականք անօրինակ, անօրինակ 16. Փիլ. Սամբլ. 562. Իրեն. հերձ. 239. տես նաև «անօրինականք».
33. անօրինականք անօրինակ 42. Թր. քեր. 24. 25. 45. Իրեն. հերձ. 109. անօրինականք անօրինակ 550.
34. անօրինականք անօրինակ 146. 179. 180. Պիտ. 379. անօրինականք

- անօրինականք անօրինակ անօրինակ 425. անօրինականք անօրինակ 8.
35. անօրինականք անօրինակ 6. Փիլ. Էլ. ևն. անօրինականք անօրինակ 351.
36. անօրինականք անօրինակ 58. Փիլ. ալլար. և Էլ. ևն.
37. անօրինականք, անօրինականք, անօրինականք անօրինակ, անօրինակ 44. 58. 84. 92. անօրինականք անօրինակ Թր. քեր. 24. անօրինականք անօրինակ Թր. քեր. 26. 27.
38. անօրինականք, անօրինականք, անօրինականք 52. Փիլ. լին. 256. Փիլ. տես. 14.
39. անօրինականք անօրինականք 98. 122. անօրինականք Պիտ. 346.
40. անօրինականք անօրինակ 34. Փիլ. նի. բ. 107. Փիլ. ժ. բան. Պիտ. 342. 344. 353. անօրինականք անօրինակ Պիտ. 396.
41. անօրինականք անօրինակ 60. Փիլ. լին. 235.
42. անօրինականք անօրինակ 26. 28. Իրեն. հերձ. 151. Տիմ. Կուլ 36. անօրինականք Տիմ. Կուլ 18. Յամբլ. պերիար. 511. տես նաև «անօրինականք».
43. անօրինականք անօրինակ 12. 132. Փիլ. լին. 115. Փիլ. Էլ. 448. Փիլ. Սամբլ. 565. Պիտ. 351.
44. անօրինականք [անօրինակ] անօրինակ [անօրինակ] 68. Փիլ. լին. 158. Պիտ. 407. Արիստ. սոտր. 373.
45. անօրինականք անօրինակ 44. 60. 78. 92. Թր. քեր. 13. 17. 27. 28. Փիլ. նի. բ. 83. Արիստ. սոտր. 379.
46. անօրինականք [անօրինակ] անօրինակ [անօրինակ] 48. 92. Թր. քեր. 17. 19. Յամբլ. պերիար. 508.
47. անօրինականք 177. Փիլ. լին. 308. Յամբլ. սոտր.
48. անօրինականք անօրինակ անօրինակ 132. անօրինականք Թր. քեր. 17. 19. Փիլ. լին. 60. 207.
49. անօրինականք անօրինակ 56. 62. Թր. քեր. 31. Արիստ. սոտր. 374.
50. անօրինականք անօրինականք 38. Փիլ. Էլ. ևն. 151. Պիտ. 343. անօրինականք Պիտ. 341.
51. անօրինականք անօրինականք 30. Պիտ. 369. անօրինականք, անօրինականք Թր. քեր. 43.
52. անօրինականք անօրինականք 160. Փիլ. լին. 361. անօրինականք, անօրինականք

- րակայական Թր. քեր. 23. 24. 46. 47. Իրեն. հերձ. 178.
53. յարացոյց παράδειγμα 18. 24. 40. 42. 44. 82. 102. 150. 152. 179. Փիլ. Լիւս. 171. Պիտ. 341. տարացոյց Թէն 156. 184. Փիլ. լին. 161. 304. Փիլ. Սամիս. 563. Պիտ. 383. Տիմ. Կուզ 322. Յամբլ. պերիար. 538 ևն.
54. յորդորական προτροπτικός 122. Պիտ. 356.
55. ներակերթիմ ἐγγυμνάζομαι 8. 179. 185. Պիտ. 347.
56. ներբողեմ, ներբողեան, ներբողական ἐγκώμιον, ἐγκωμιάζω, ἐγκωμιαστικός 16. 24. 32. 108. 130. 132. 136. 138. 146. 175. Փիլ. Սամիս. 554. Փիլ. Յոֆն 607. Պիտ. 353. 363. 413 ևն.
57. ներգործեմ, ներգործութիւն, ներգործական ներջեալ, ներջեալ, ներջեալական 38. 46. 114. 118. 184. Թր. քեր. 22. 23. 45. Փիլ. լին. 177. 261. Փիլ. Սամիս. 551. Իրեն. հերձ. 49. 69. 76. 99. 110. 113. Իրեն. ցոյցք 26. Տիմ. Կուզ 17. 22 ևն. Յամբլ. ստոր. 448. Արիստ. ստոր. 471. Յամբլ. պերիար. 502 ևն.
58. ներկայ [ժամանակ] նեստոճ [չրոնոս] 68. Թր. քեր. 23. 24. 45. Փիլ. լին. 158. Պիտ. 344.
59. ներշրջանակք ճշնակա 4. Փիլ. լին. 190. Փիլ. Էլ. 451. ներշրջանական, ներշրջանակութիւն Փիլ. ստեպ.
60. շողկապ սնճեսմոս 94. Թր. քեր. 12. 35. Փիլ. նիւ. բ. 83. Իրեն. հերձ. 158. Արիստ. պերիար. 465. Յամբլ. պերիար. 489. անշողկապ ասնճետոս Թէն 94. Արիստ. պերիար. 465.
61. շարագիր, շարագրող, շարագրած, շարագրածութիւն սպրաբեճ, սպրաբա 6. 18. 30. 62. 100. 102. 175. 178. 179. 180. Թր. քեր. 1. 2. Փիլ. նիւ. բ. 52. 64. Փիլ. Լիւս. 161. Պիտ. 377. 379. Իրեն. հերձ. 21. Տիմ. Կուզ 19. 83. 256 ևն.
62. շարագասեմ, շարագասութիւն սպտասո, սպտաճիս 76. 166. 168. 180. Փիլ. լին. 336. Փիլ. նիւ. բ. 77. Իրեն.
- հերձ. 236. Պիտ. 418. Յամբլ. ստոր. 457. Արիստ. պերիար. 465. 507 ևն.
63. շարագրեմ, շարագրութիւն, շարագիր սպտեմիլ, սնճետոս, սնճետոս 30. 168. 170. 177. 180. 182. Թր. քեր. 12. Փիլ. լին. 206. 210. 359. Փիլ. Լիւս. 142. Փիլ. Սամիս. 561. 573. Իրեն. ցոյցք 2. Տիմ. Կուզ 115. 178. Ներած. Պորփ. 246. Արիստ. պերիար. 465. Յամբլ. պերիար. 492.
64. շոպեմ ասարեճ 112. Պիտ. 404. Փիլ. քն. ժա.
65. սրտակ տոնոս 175. Թր. քեր. 3. 38. 39. համտորակ Փիլ. Լիւս. 171.
66. սղբերգութիւն տրագոճիա 176. Թր. քեր. 2. Պիտ. 369. 411. սղբերգակ, սղբերգական Թր. քեր. 7. Փիլ. լին. 413. Պիտ. 369. Իրեն. հերձ. 182.
67. սրակութիւն քուճտիս 170. 172. սրակ, սրականամ, սրակութիւն Փիլ. լին. 376. Փիլ. նիւ. ա. Պիտ. 464. Իրեն. հերձ. 171. Տիմ. Կուզ 324. Ներած. Պորփ. 235. 246. Արիստ. ստոր. 362. 386. Յամբլ. ստոր. 410. 430 ևն.
68. սղղական [հոլով] ճրթիլ [քտոսիս] 44. 78. Թր. քեր. 17. 28. Յամբլ. պեր. 500.
69. սննակութիւն ճիւս 16. 104. 183. 185. Փիլ. լին. 77. Փիլ. Լիւս. 166. Պիտ. 360. 506. Իրեն. հերձ. 166. Իրեն. ցոյցք 6. Տիմ. Կուզ 31. 66 ևն. Արիստ. ստոր. 378. Յամբլ. ստոր. 431.
70. շափարեր մետրոս 134. Փիլ. նիւ. բ. և Լիւս. շափարերութիւն Փիլ. լին. 125. 323.
71. սաասոս սպմբան 46. Թր. քեր. 19. Պիտ. 368. Ներած. Պորփ. 239 ևն.
72. սարագրեմ քերտեմիլ 6. Իրեն. ցոյցք 9. Տիմ. Կուզ 98. 163.
73. սարառեմ քերտուեճ 16. Փիլ. ալլար.
74. սարունակեմ, սարունակութիւն, սարունակական քերտեճ, քերտեճի ևն. 112. 116. 150. 156. 162. 177. Թր. քեր. 2. 18. Փիլ. լին. 1. 119. 223. Պիտ. 354. 415. Իրեն. հերձ. 14. 41. 64. 144. 226. Իրեն. ցոյցք

8. Տիմ. Կուղ 83. 270. Ներած. Պորփ. 228. 242. Յամբլ. սոոր. 413. Յամբլ. պերիար. 495.
75. սահաւելիշխանութիւն ձկնաբուս 134. սահաւելիշխանական ձկնաբուսական Փիլ. ժ. բան. սահաւապետութիւն Փիլ. լին. 305. Փիլ. ժ. բան.
76. սեղանահապտութիւն երօսսւլա 112. սեղանահապուս Պիտ. 386.
77. սեռական [հորով] γενική [πτώσις] 44. 78. Թր. քեր. 17. 18. 21. 28. Յամբլ. պերիար. 500.
78. դարպար 168. Թր. քեր. 19.
79. վերաբերեմ, վերբերեմ ἀναφέρω 34. 48. 58. 60. 64. 78. 179. Թր. քեր. 10. 11. 41. Փիլ. լին. 373. Պիտ. 341. 414. 422. 457. Տիմ. Կուղ 198. 238. Յամբլ. սոոր. 448. Յամբլ. պերիար. 489.
80. վերծանութիւն, վերծանումն ἀνάγωσις, ἀνάγωσµα 16. 175. 177. 179. Թր. քեր. 1. 2. Տիմ. Կուղ 100. 241. Յամբլ. պերիար. 488. 508.
81. տած 28. Փիլ. լին. Պիտ. անտած Պիտ. 472. Փիլ. նիւ բ. 46.
82. տաք ἔπος 32. Թր. քեր. 2. Փիլ. լին. 245.
83. տառ στοιχείον 68. 102. 104. Թր. քեր. 4. 9. Փիլ. լին. 163. 212. 335. Պիտ. 386. Արիստ. սոոր. 404. Յամբլ. պեր. 506.
84. տարօրէն παρανομος 173. 185. Փիլ. Յոնն. Իրեն. հերձ. 205. Պիտ. 354. տարօրէնութիւն Փիլ. նիւ. բ. 97. Փիլ. Սամփս. 562. Պիտ. 380. տես նաև «արտօրէն».
85. տիպ, տպաւորիմ 178. 182. Փիլ. Լիւս. 138. Փիլ. լին. Իրեն. հերձ. 71. Յամբլ. պերիար. 490.
86. տրական [հորով] δοτική [πτώσις] 46. 78. Թր. քեր. 17. 28.
87. տրամաբանեմ, տրամաբան, տրամաբանական διαλέγομαι, διάλογος, διαλέκτικος 24. 52. 58. 76. 88. 94. Փիլ. նիւ. բ. 77. Փիլ. Լիւս. 147. Տիմ. Կուղ 18. 144. Յամբլ. սոոր. 417. 426. 443. Յամբլ. պերիար. 508. 511. 513.
88. տրամադրեմ, տրամադրութիւն διατίθημι, διάθεσις 26.

68. 122. 138. 179. Թր. քեր. 22. Փիլ. լին. 366. 381. 401. Յամբլ. սոոր. 453.
89. փաղանունութիւն, փաղանունաբար συγγουμία, συγγύμως 80. 166. Թր. քեր. 17. 19. Ներած. Պորփ. 232. Արիստ. սոոր. 359. 367. Յամբլ. սոոր. 457. Յամբլ. պերիար. 519.
90. հոմանունութիւն, հոմանուն, հոմանունաբար ὁμωγουμία, ὁμωγουμος, ὁμωγύμως 36. 64. 74. 76. 132. 166. 168. Թր. քեր. 17. 19. Փիլ. Լիւս. 139. Տիմ. Կուղ 78. 105. Յամբլ. սոոր. 415. Ներած. Պորփ. 232. Յամբլ. պերիար. 498. 504. 533.
91. փաստ, փաստաւոր αἰτία, αἰτιώδης 36. փաստական, փաստաբանական Թր. քեր. 17. 35. 36. Փիլ. լին. 262. փաստաբանեմ Փիլ. նիւ. բ. 96. փաստաբանութիւն Պիտ. 407.
92. փիճ μιαρός 110. Փիլ. լին. և ժ. բան.
93. փոխադրութիւն 182. փոխադրեմ μετατίθημι Պիտ. 353. 420. Տիմ. Կուղ 41. Արիստ. պերիար. 476. Յամբլ. պերիար. 498.
94. քանակութիւն ποσότης 170. 172. Թր. քեր. 32. Փիլ. լին. 246. Փիլ. նիւ. բ. 78. քանակ Արիստ. սոոր. 372 ևն. Յամբլ. սոոր. 410.
95. քաջագոյնութիւն εὐαισθησία 130. Փիլ. լին. և իմաստ. Պիտ. 430.
96. քաջայայտ πρόδηλος 30. Փիլ. ժ. բան. Պիտ. 399. 437.
97. քաջակայելագոյն 184. քաջակայելուչ Պիտ. 347. 504.
98. քաջարութիւն ἀνδραγαθήµα 108. Փիլ. լին. և քհ. Պիտ. 350. 491.
99. քատակեմ, քատակութիւն μιμέομαι, μέμησις 14. 28. 177. 180. Փիլ. լին. Տիմ. Կուղ 11. 213. 277.
100. քերդող, քերդողական ποιητής, ποιητικός 6. 10. 18. 24. 28. 32. 34. 72. 74. 98 ևն. Թր. քեր. 1. 2. 4. Փիլ. նիւ. բ. 53. 73. Փիլ. Լիւս. 148. Փիլ. լին. 187. 384. Փիլ. Էլ. 472. Պիտ. 359. 361. 364. Արիստ. պերիար. 478. Յամբլ. պերիար. 488.

12. Պիտոյից-Փիլոնյան յերկերի վերոհիշյալ ճոխ ու հարուստ բառապաշարը, վոր գործ է անված Թեոնի գրք-վածքում, թողնում է առաջին հայացքից այն տպավորու-թյունը, վոր այս թարգմանութունը ևս իմբակից է Փի-լոնյան շերտի հունարան հնագույն թարգմանություններին:

Ուշագրավ է այդ տեսակետից, վոր ինչպես Թրակացու քերականության, նույնպես և Թեոնի թարգմանության մեջ հունարան բառակազմությունը դեռևս բավականաչափ հաս-տատուն չէ և նախդիրներով բարդված հունարեն բառերը հայերենում թարգմանված են յերբեմն անբերբ բառերով: Որինակ՝

1. ἀποφαίνω, ἀπόφασις թարգմանված են «ապերեկեցուցա-նեմ», «ապերեկութիւն» 10. 112. 182. և «բացերեկե-ցուցանեմ», «բացերեկութիւն» 34. 36. 38. 40 ևն:
2. προσέμιον «առաջարան» 108. 110. «նախերգան» 54. 62. 134 ևն:
3. παράνομος «արատրէն» 106. և «տարորէն» 173. 185.
4. διαφορά «զարմազանութիւն» 4. և «տարբերութիւն» 56. 146 ևն:
5. ἀντιλογία «թերարանութիւն» 16. և «հակաբանութիւն» 28. 44:
6. διαλογικός «խօսական» 6. իսկ δισλόγος «տրամաբան» 24. 58. ևն:
7. συντίθημι «շաղաղբեմ» 6 և «շարաղբեմ» 30. 168. 177 ևն: Թեոնի բառապաշարի ու բառակազմության հետաքրքիր այս առանձնահատկությունները, վոր հավանական նշաններ են նրա հնության (տես «Յունարան գալրոցը» իմ ուսումնա-սիրության մեջ էջ 119—122), բնավ չեն ապացուցանում ըստ իս այս թարգմանության իմբակցությունը հունարան առաջին խմբի թարգմանությունների հետ, այլ ցույց են տալիս, վոր սրա ժամանակը բավական մոտ յեղած պիտի լինեն Թրակացու քերականության, Պիտոյից գրքի և Փի-լոնի ու Իոնենտէի թարգմանությունները ժամանակաշրջանին:

13. Հաջորդելով հունարան թարգմանությունների հը-նագույն խմբին և գտնվելով նրանց բառապաշարի և նրանց

ստեղծած քերականական ու ճարտասանական տերմինաբա-նության ազդեցության տակ՝ Թեոնի հայերեն թարգմանու-թյունը ունի նաև լեզվական ու քերականական այն կարե-վոր առանձնահատկությունները, վորոնք բնորոշ են հունա-բան յերկրորդ խմբի վերոհիշյալ թարգմանությունների հա-մար (տես «Յունարան գալրոցը», էջ 125—136):

Ուշագրության արժանի յեն այս տեսակետից Թեոնի թարգմանության այն հունարան կամ հազվադեպ բառերը, վորոնք անձանոթ լինելով վոսկեգարյան անվանված մա-տենագրության և, հավանորեն, նաև Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանություններին՝ առաջին անգամ կազմված ու գործածված պիտի լինեն հենց այս յերկրորդ խմբի թարգմանությունների ժամանակաշրջանում: Այդպիսի բա-ռեր են, որինակ՝

1. արտունութիւն ἐξοχή 34. Արիստ. ստոր. 373. Մհմ. Դաւթի 154 ևն.
2. բացորոշեալ ἀφωρισμένος 166. բացորոշեմ, բացորոշու-թիւն Տիմ. Կուղ 11. Ներած. Պորփ. 228. 239. Ա-րիստ. ստոր. 368. 385. Յամբլ. ստոր. 440. Յամբլ. պերիար. 523.
3. նախերգան προσέμιον 54. 62. 134. 146. 179. 183. Տիմ. Կուղ 48. 283. Յամբլ. ստոր. 448 ևն. προσέμιον բա-ռը, վորը կազմված է $\pi\rho\omicron$ = «նախ» և $\omicron\mu\omicron\varsigma$ = «շաւիղ» բառերից, հունարան առաջին խմբին պատկանող Պիտոյից գրքում (էջ 399, 413, 445, 551) թարգման-ված է միանգամայն ճիշտ «նախաշաւիղ», իսկ յեր-կրորդ խմբի թարգմանություններում $\omicron\mu\omicron\varsigma$ «շաւիղ» շփոթված է $\omicron\mu\eta$ «երգ» բառի հետ և $\pi\rho\omicron\omicron\mu\omicron\varsigma$ բա-ռը թարգմանված է սխալ «նախերգան» (տես Ա-տոնց, «Արուեստ Դիոնիսեայ քերականի», էջ CLX XXIX—CXC, հմտոե «Յունարան գալրոցը», էջ 132—133).
4. ներածեմ εἰσάγω 6. ներածեմ, ներածութիւն Ներած. Պորփ. 227. Տիմ. Կուղ 94 ևն.
5. ներընդունիմ ἐνδέχομαι 88. 92. 94. 164. ներընդունիմ,

ներընդունական Ներած. Պորփ. 239. Արիստ. պեր. 467. 478 ևն. Յամբլ. պեր. 521 ևն.

6. ներհակ, ներհական ἐνάγκτος 50. 62. 66. 78. 112. 114. 136. 140. 148. 150. 152. 154. 158. 162. 164. 166. 173. 174. Տիմ. Կուզ 160. Արիստ. ստոր. 368. Յամբլ. ստոր. 413. 416. 417. Արիստ. պերիար. 466. 475. Հունարան առաջին խմբի յերկերը ἐνάγκτος բառը թարգմանել են «ընդդիմակ».

7. պարաբանում περιπαρέω 10. Արիստ. ստոր. 381.

8. ստորասեմ καταφάσκω 94. ստորասեմ, ստորասուծիւն, ստորասական ևն Արիստ. ստոր. 362. 399. Յամբլ. ստոր. 431 ևն. Արիստ. պերիար. 461 ևն. Յամբլ. պերիար. 500. 512 ևն.

9. տարբերեմ, տարբերութիւն διαφέρω, διαφορά 34. 36. 56. 90. 108. 118. 146. 148. 170. Տիմ. Կուզ 262. Արիստ. ստոր. 359. 367. Յամբլ. ստոր. 413. Արիստ. պերիար. 471. Յամբլ. պեր. 496 ևն.: Առաջին խմբի յերկերը նույն հունարեն բառերը թարգմանում են «զարմազանութիւն», «զանազան» ևն.

10. հակասեմ 185. հակասութիւն, հակաւարար Արիստ. պերիար. 472. Յամբլ. պերիար. 511. 540:

14. Քերականական իր առանձնահատկություններով ևս թեոնի թարգմանությունը հարում է հունարան թարգմանությունների յերկրորդ խմբին և, ինչպես կը տեսնենք, մոտ է առանձնապես Պորփյուրի «Ներածութեան» թարգմանության:

Հունարան Դպրոցի մասին իմ վերոհիշյալ աշխատության մեջ յես մատնացույց եյի արել (տես «Յունարան Դպրոցը», էջ 130), վոր հունարան թարգմանությունների առաջին (Թրակացու քերականության մեջ) և յերկրորդ խմբերում հունարենն չ' նախդիրը թարգմանված է ըն, և, որինակ՝

ըն բաղդատութեան Թր. քեր. 15. ներկինս Տիմ. Կուզ 48. նըմեզ Տիմ. Կուզ 54. 60. նենթակայում Ներ. Պորփ. 239. ըն մարմնի Արիստ. ստոր. 360. 363. ըն

գոյացութեան, ըն քանակի Յամբլ. ստոր. 410. ըն ճարտասանութեանն Արիստ. պերիար. 465. ըն շարաբանութիւնն Յամբլ. պերիար. 487 ևն:

Արդ՝ նույն այս նախդիրը գործածվել է նաև թեոնի թարգմանության հետևյալ հատվածներում՝

1. էջ 4—«և ես յոյս յանձին կդեալ պիտառոցել նասելն յօժարեցելոց».

2. էջ 14—«առանց սոցա ըն կդման եւ ստեղծման».

3. էջ 78—«պեղբայր սպանեալ զԲրուդաոս նընթրոջ»:

Ուշադրով է գարծյալ, վոր նույն այս և կամ ըն նախդիրը, վոր Թրակացու քերականության մեջ¹ գործածված է հաճախ հունարենն ἐκ և ἀπό նախդիրների նշանակությամբ՝ մի անգամ նաև թեոնի թարգմանության մեջ համապատասխանում է հունարենն ἀπό նախդիրին. տես էջ 14—«նառասպելէն և պատմութեանէն» = ἀπο τοῦ μύθου καὶ τῆς διηγήσεως (յերկրորդ խմբի թարգմանություններից Պորփ. Ներած. և ունի մի անգամ «ներկոցուց» էջ 230 և Արիստ. ստոր. ունի նույնպես մի անգամ «նորոց», էջ 383):

15. Թեոնի թարգմանության ժամանակը վորոշելու համար մեծ կարևորություն ունեն, մանավանդ, նրա այն քերականական առանձնահատկությունները, վորոնք հավանական նշաններ են, վոր այս թարգմանությունը սերտ առնչություն ունի, գլխավորապես, Պորփյուրի «Ներածութեան» թարգմանության հետ:

ա. Այդ տեսակետից ուշադրության արժանի յե, ամենից առաջ, սեռական հոլովի վերջավորության x տառը, վորը գործ է անված վնչ միայն «Ներածութեան» ընդգրում, ինչպես մատնանիշ եր արված իմ «Յունարան Դպրոցը» ուսումնասիրության մեջ (էջ 187—188), այլ նաև այս թարգմանության հետևյալ հատվածներում.

1. էջ 46—«Իսոկրատու ճարտասանի զքաջարոյսս յաշակերտացն աստուածոց մանկունս ասացելոյր գոլ ճառեցեալն յիշատակի եհաս»:

¹ Տես «Արուեստ Դիոնիսեայ քերականի», էջ 9, 16, 18, 19 ևն. հմտե «Յունարան Դպրոցը», էջ 152:

2. Եջ 46—«Երկաւորեկի փողահարի ըմբռնեցելոյ ի շնութեան և գանուանէն կախեցելոյր՝ պատահն յիշատակի եհաս».

3. Եջ 46—«Լակոնացոյ հարցելոյր ուրումն գնա, զէր գտանման երկրին ունին Լակեղեմոնացիքն, և ցուցեալ գնիգական, գործեցեալն յիշատակի եհաս»:

բ. Նուէն է՛ նախդիրը, վորը Թրակացու քերականութեան, Պորփյուրի «Ներածութեան» մեջ և Յամբղիկյան խմբի յերկերում թարգմանված է նաև Անտ¹, ունի համապատասխան թարգմանութեամբ նաև Թեոնի ճարտասանական գրվածքը. որինակ՝

ներ ամենեալն 54. ներ առասպելն 58. ներ [յաղագս] առասպելացն 84. ներ լինելութեանցն 179. ներ յաղագս դասու 158. ներ յաղագս պատմութեան 64. ներ յաղագս պիտիցն 58. ի ներ պիտոջն 44.

Խիստ ուշադրավ է, բացի այդ, վոր «Անտում» նախդիրն ունի վնչ միայն Պորփյուրի «Ներածութեան»-ը, ինչպես մատնանշված եր «Յուներան Դպրոցը» իմ աշխատութեան մեջ (Եջ 188—189), այլ և Թեոնի թարգմանութեանը. այսպես՝

ներում յաղագս վերծանութեան 179. ներում յաղագս պատիին 184. ներում վոր ըստ Քտեսիփոնտայն 184. («ներում բարույն» ունի Արիստ. պերիար., Եջ 486):

գ. Թեոնի թարգմանութեանը հատուկ են նաև այն արվեստական հունարանութեանները և քերականական ուրույն ձեերը, վորոնք սովորական են Պիտոյից-Փիլոնյան և Յամբղիկյան խմբերի թարգմանութեաններում. որինակ՝

1. ըստմասինքն τὰ κατὰ μέρος 62. ըստմասնեայքն Ներած. Պորփ. 233. ըստմասինքն Ներած. Պորփ. 234.

2. ի վախճանէցն 66. ի վախճանիցն 86. ի վախճանիսն 84. 86. հսկսե ի նոցանէց, զըստմասնէց Ներած. Պորփ. 240. ըստ բոլորէցն Արիստ. պերիար. 466. 469. զյաջմէցն Տիմ. Կուզ 230.

¹ Տես Թրակ. քեր. 2. 32. Ներած. Պորփ. 233. Արիստ. սոոր. 362. Արիստ. պերիար. 461. 462 են.

3. յառաջմէն ἐκ τῆς πρώτης 20. Փիլ. լինել 120.

4. պիտառոցել συλλήψασθαι 4. հսկսե յարառոցին Թր. քեր. 36. Ներած. Պորփ. 238. յարառոցեալ Թր. քեր. 15. 37:

Լեզվական ու քերականական վերոհիշյալ բոլոր զխառու-թյուններն իրանց ամբողջութեամբ, թվում է ինձ, վոր Թեոնի թարգմանութեան ժամանակը վորոշում են հունարան յերկրորդ խմբի թարգմանութեանների ժամանակաշրջանում՝ վեցերորդ դարի յերկրորդ կիսում: Ինչպես տեսնում ենք, այս թարգմանութեանը քերականական մի քանի բնորոշ իր առանձնահատուկութեաններով հարում է, գլխավորապես, Պորփյուրի «Ներածութեան» թարգմանութեան: Ավելի քան հավանական է, բացի այդ, վոր նրա ժամանակը բավական մոտ յեղած պիտի լիներ Թրակացու քերականութեան և Պիտոյից-Փիլոնյան թարգմանութեանների ժամանակաշրջանին, վորը պետք է, հավանորեն, ընդունել վեցերորդ դարի առաջին կիսի սահմաններում (համտե «Յուներան Դպրոցը», Եջ 235—236):

16. Թեոնի թարգմանիչը ծանոթ է յեղել, ինչպես ասացինք, քերականական այն հատուկ հունարան բառապաշարին, վորի մեծագույն մասը կազմված է յեղել ըստ յեղելութին, Թրակացու քերականութեան թարգմանութեան ժամանակ:

Նիկ. Ադանցն իր «Արուեստ Իոնիսեսայ քերականի» աշխատութեան մեջ (Եջ CLXX) մասնացույց եր արել, վոր փաղտնուն կամ բազմանուն գաղափարի բացատրութեան Թրակացու հատվածը՝ հունարեն ἄορ, ξίφος, μάχαιρα, σπάθη, φάσγανον բառերը՝ թե Թրակացու քերականութեան (Եջ 19) և թե Ելիասին վերագրված Արիստոտելի Ստորագրութեանց մեկնութեան մեջ (Եջ 51 և 55) թարգմանված են «խադ, դալապը, մաքտացու, սուսեր, նրան»: Միևնույն բացատրութեանը, ինչպես մատնանշված եր «Յուներան Դպրոցը» իմ ուսումնասիրութեան մեջ (Եջ 179—180), հայանի յե յեղել Թրակացու քերականութեան թարգմանութեանից վնչ միայն

Ելիասի մեկնության, այլ և Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» գրոց թարգմանիչները:

Հետաքրքրական է այժմ, վոր ընդհանուր ընդունված նույն այդ բացատրությունը և թրակացու քերականություն թարգմանչի գործածած հազվագյուտ ու սաարտի «գալապը» բառը մեջ են բերված նաև թեոնի հետևյալ հատվածում՝ էջ 180—«Առ բազմանուանութիւն՝ յորժամ ընդդէմ այնր նշանակեալ լինի մի իցէ (°) և անուանք բազումք, որդան սուսեր, գալապը»:

Ինչպես այս, նույնպես և տերմինաբանական վերոհիշյալ բազմաթիվ նմանությունները՝ ուշագրավ ու հովանական նշաններ են ըստ իս, վոր «Յաղագս ճարտասանական կրթութեանց» թարգմանություն վրա լեզվական մեծ ազդեցություն է ունեցել հատկապես թրակացու քերականություն թյան թարգմանությունը:

17. «Յաղագս ճարտասանական կրթութեանց» գրվածքը, վորը թարգմանված է Պիտոյից գրքից հետո՝ թեև ունի սրա հետ հունարան բառապաշարի և, գլխավորապես, տերմինաբանություն վորոշ նույնություն, սակայն՝ լինելով հունարան յերկրորդ շերտի թարգմանություն՝ ունի նաև լեզվական բնորոշ տարբերություններ, վորոնք պարզ նկատելի յեն, մանավանդ, հունարեն համանման հատվածների թարգմանություններում:

Նման ու համապատասխան այդպիսի հատվածներ են, որինակ, հետևյալները.

1. Թեոն, էջ 32

«Պէտք են համառօտ և արագ բացերևութիւն կամ գործ հանդիպողութեամբ վերբերեալ յորոշեալ ինչ դէմս կամ համեմատեալ գիմաց».

Χρεία ἐστὶ σύντομος ἀπόφασις ἢ πράξις μετ' ἐδοστοχίας ἀναφερομένη εἰς τι ὄρισμένον πρόσωπον ἢ ἀγαλογούν προσώπου.

Նման Պիտոյից գիրք, էջ 341՝

«Պէտք են բացայիշատակք համառօտ քաջագիրպութեամբ ի դէմս ինչ վերաբերեալ».

2. Թեոն, էջ 36՝

«Թէանով Պլեթագորեան հարցեալ յուսմինէ՝ քանօրեակի՞ն յառնէ մաքուր ի թիսմոփորոնս իջանէ. սասց՝ յիւրմէն և նոյնժամայն, յօտարէն և երբէք ոչ».

Θεανὸς ἢ Πυθαγορικὴ φιλόσοφος ἐρωτηθεῖσα ὑπὸ τινος ποσταία γυνή ἀπ' ἀνδρὸς καθαρὰ εἰς τὸ θεομοφορεῖον κάτεισιν, εἶπεν, ἀπὸ μὲν τοῦ ἰδίου παραχρημα, ἀπὸ δὲ τοῦ ἀλλοτρίου οὐδέποτε.

Նման Պիտոյից գիրք, էջ 352՝

«Գթէանով ոմն Պիթագորական հարց, եթէ յետ քանի՞ ատուր կնոջ առ այր մերձաւորութեան արժան է մտանել ի տէրունիսն: Եւ նա ասէ. յիւրմէն՝ նոյնօրին, յօտարէն՝ և ոչ բնաւ երբէք»¹.

3. Թեոն, էջ 38՝

«Դիօգենէս Շնական տեսնելով մանուկ զի ուտէր թան՝ զմանկալարժն մախան հարք».

Διογένης ὁ Κυνικός φιλόσοφος ἰδὼν ὀσφοφάγον παιδά τὸν παιδαγωγὸν τῆ βακτηρία ἔπαισε.

Նման Պիտոյից գիրք, էջ 342՝

«Դիօգենէս տեսեալ զմանուկ ստամբակ, զմանկածուն գաւազանուն հարք».

4. Թեոն, էջ 116՝

«Արատասնութիւն է բան պարունական յայտնապէս ի դուրս ածելով գազդեցեալն».

Ἐκφρασις ἐστὶ λόγος περιηγηματικὸς ἐναργῶς ὅπ' ὅψιν ἄγων τὸ δηλούμενον.

Նման Պիտոյից գիրք, էջ 529՝

«Արատասնութիւն է բան պատմական ի դէմս ածելով երևելապէս զյայտնեալն».

5. Թեոն, էջ 116՝

«Եւ գիմաց, իրր թէ Հոմերական.—

Այս հատվածի լեզվական տարբերությունները թեոնի համապատասխան հատվածից նկատելի է ն. Ակինյանը վերոհիշյալ էր հղվածում (տես Հանդ. Ամս. 1934, էջ 207—208):

«բորրւակութիւն գթիկամբք և աջմայտ,
գանգրահեր».

Προσώπων μὲν οὖν, οἷον τὸ Ὀμηρικόν,
γυρὸς ἔην ὤμοις, μελανόχροος, οὐλοκάρηνος.

հմտե Պիտոյից գերք, Էջ 529՝

«Զգէմս, որպէս Հոմերոս՝ գիգիւսևս,

հրդնի էր թիկամբք՝ սևագոյն, գանգրահեր»:

Համապատասխան այս հատվածներում միևնույն հաւնարեն բառերը թարգմանված են, ինչպես տեսնում ենք, տարբեր կերպ

ա. հունարեն εὐστοχία բառը թեոնի համավածում թարգմանված է «հանգիւղողութիւն», իսկ Պիտոյից գրքի հատվածում՝ «բաշագիւղութիւն» (տես վերև վկ. 1).

բ. հունարեն θεσμοφορεῖον, վոր Դեմիտրեյի տաճարի անունն էր, թեոնի հատվածում թարգմանված է «թեամփորոն», իսկ Պիտոյից գրքում՝ «տէրունիք» (տես վկ. 2).

գ. հուն. παιδαγωγός—թեոնի մեջ՝ «մանկավարժ», Պիտ. «մանկածու» (վկ. 3).

դ. հուն. βακτριάζ—թեոնի մեջ՝ «մակ» (= «մական»), Պիտ. «գաւագան» (վկ. 3).

ե. հուն. ἐναργῶς—թեոնի մեջ՝ «յայտնապէս», Պիտ. «երևերապէս» (վկ. 4).

զ. հուն. τὸ θελόμενον—թեոնի մեջ՝ «գաղղեցեալն», Պիտ. «չյայտնեալն» (վկ. 4).

է. հուն. γυρὸς—թեոնի մեջ՝ «բորրւակութիւն», Պիտ. «հրդնի» (վկ. 5).

ը. հուն. μελανόχροος—թեոնի մեջ՝ «աջմայտ», Պիտ. «սևագոյն» (վկ. 5):

Այս տարբերութիւնները, վոր չեն կարող պատահական համարվել, ապացուցանում են ըստ իս, վոր այդ թարգմանութիւնները վնչ միայն միևնույն թարգմանչի գործ չեն, այլ պատկանում են, ինչպես վերև տեսանք, թարգմանչական հունաբան տարբեր խմբերի:

18. Թեոնի ճարտասանական յերկը հայոց մատենագրութեան մեջ հիշատակված է, վորքան ինձ հայտնի յե, Համամ Արևելցու (9-րդ դար) քերականութեան մեկնութեան և Գրիգոր Մագիստրոսի (11-րդ դար) թղթերից մեկի հետեյալ հատվածներում.

ա. «Համամ Արևելցույ, Մեկնութիւն քերականին», տես Ադոնց, «Արուեստ Իրոնիսեայ», Էջ 269՝

«Եւ թէ ընդէր յիտուն եւ գքանակութիւն սորին թուոց, զի իմաստասիրացն բանք և պրակք սահմանեալն և չափեալն գեղեցիկ թուին, որպէս բառեակն և ութնեակն Պիթագորականացն և Պլատոնականացն վեցեակն և զերկեակն ի բազմաւորականն առնլով և Թէոփեականացն երկից եօթնեակն զլուխ ճարտասանութեան ևն».

բ. Նույնը, Էջ 280՝

«Պարզն Հոմերոսեան է եւ ջոկամանքն Արիստոտելիանց եւ ամանականքն Թէոփեականաց և սահմանականքն Պիթագորեանց եւ գեղեցկաբանեն Պլատոնի ևն».

գ. Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Նրար. կ. Կոստանեանցի, Աղէքսանդրապոլ 1910, Էջ 97—98 («Առ Գաղիկ որդի Աբասայ յաղագս գիտնական կրօնաւորին Գրիգորի Հնձացույ»)

«Զի տեսնեմք զքեզ ի Հոմերական տաղան վերտառեալ չափաբերական և ստանաւորս հագներգական կարկատեալ. զի և դա յայնսորիկ յարդարեալ, զի Թէոփեակն¹ արհեստն հոետորական յորդորեալ շարժել զքեզ մակտառեսցէ զօրէն Արիստոտէլի, որ առ Աղէքսանդրոս կամ զՓերեքզէս յԱրգացի սպարանան և զՊլատոն ի Սիկիլիա, թողում զՀոմերոսին, որ առ Աքիլղղաս աստուածաբանական հանդէս և առ Աբամազդ, որ զՈ-

¹ Տպագրված է «Թոփեան», սակայն Կոստանյանցի ոգտագործած ձեռագիրները (տես Էջ 265), ինչպես մասնանշել է Ակիւնյանը (Հանդ. Ամս. 1934, Էջ 204), ունեցել են նաև «թիոփեան» ընթերցվածը:

լումպիրոս գրէ շարժիլ ի խիզախել դիւցազանն և յակնարկել յօնիցն»:

Այս վկայութիւններէց յերրորդում «արհեստն հոտորական» յերկը պարզապես Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» գրվածքն է, վորի հայերեն թարգմանութիւնը ծանօթ է յեղել Գրիգոր Մագիստրոսը: Նրա թղթերում կան հատվածներ, վորոնց ազդուրը պետք է յեղած լինի հենց Թեոնի հայերեն թարգմանութիւնը: Այս վերջինից է առնված, որինակ, իր նամակներէց մեկում հետևյալ հատվածը.

Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 5 («Առ տէր Պետրոս»)

«Սոկրատէս մեռանի սակս համբակացն գիտողութեան և ի կատական հեգնարանութիւնսն՝ Անիրամէ, ասեն, մեռանիս. պատասխանեալ՝ Կամիք, զի յիրաւի»:

համտե, Թեոն, էջ 40՝

«Սոկրատէս իմաստասէր Ապոլլոգորայ յաշակերտաց ուրումն նմա ասացեալ՝ Անիրաւ մահ հատին ի վերայ քո Աթենացիքն, ընդդէմ ծիծաղեալ ասէ՝ Նէ դու կամէիր թէ յիրաւի»:

Կարևոր է առանձնապես Համամ Արևելցոց վերև մեջ բերված առաջին վկայութիւնը, վորի մեջ մատնանշված է, վոր «Թէոֆիլականացն երկից հօթնեակն գլուխ ճարտասանութեան»: Նէ իրավի, Թեոնի ճարտասանական յերկի հայերեն թարգմանութիւնն ունի՝ յեթե չհաշվենք առաջաբանը և «յաղագս մանկանց վարժման» ներածականը՝ բուն ճարտասանութիւն վերաբերյալ ընդ ամենը տասն և չորս գլուխ, այսինքն՝ «երկից հօթնեակն»: Համամ Արևելցուն հայտնի չէ յեղել, ըստ յերևույթին, Թեոնի թարգմանութիւն «յաղագս հակաճանութեան» 15-րդ գլուխը, վորը պահասում է Երևանի № 870 ձեռագրում, սակայն ծանօթ է յեղել, ինչպես վերև յենթադրեցինք, Եջմիածնի 1223 թվի № 2093 ձեռագրում պահպանված ճարտասանական համառոտագրութիւն հեղինակին:

19. Թեոնի Նախակրթութիւնաց նորագլուստ այս թարգմանութիւն հրատարակութիւնը պարզվում է այժմ, վոր Մովսես Խորենացին ոգտված է յեղել իր պատմութիւն մեջ վնչ թե Թեոնի հունարեն ընագրից, ինչպես այդ յենթադրել էր գերմանական գիտնական Ադոլֆ Բաումգարտները¹, այլ հայերեն թարգմանութիւնից:

Բաումգարտների մատնանշած համապատասխան հատվածները մեջ ենք բերում, զնելով միմյանց հետևից Խորենացու պատմութիւն և Թեոնի հայերեն թարգմանութիւն ընագրերները.

ա. «Մովսիսի Խորենացու, Պատմութիւն Հայոց», Տըփուրիս 1913, II, Բ, էջ 104՝

«և Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յերականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն, որ յաղագս բաժանելոյ գրուր երկիրս յերիս մասունս, և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Լիբիէ, և զոմն Ասիայ, որում և տիրեաց Արշակ»:

համտե Թեոն, էջ 20՝

«և յերականացն պատմութեանց են ինչ, զորս և ի Հերոդոտայ առնուլ, որպէս զայն որ ի չորրորդէն յաղագս բաժանելոյն զբալոր երկիր յերիս մասունս և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Ասիա և զոմն Լիբիա»².

բ. Խորենացի, III, ԺԹ, էջ 278՝

«քաջ և արի երևեալ [Արշակ] քան զԱքիլլևս, իսկ արդիամբք Թերսիտեայ նմանեալ կազի և սրագլխոյ»:

¹ S. Adolf Baumgartner, Ueber das Buch „die Chrie“, Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Bd. 40, Leipzig 1886, էջ 513—514:

² Տես նաև Պրոկոպիոս (De bello Goth. IV, 6)՝

«Արդ՝ Հերոդոտ Հալիկարնացին իր պատմութիւնաց չորրորդ գրքում ասում է, վոր ամբողջ յերկիրը մեկ է և բաժանվում է յերեք մասի, վորոնք անվանվում են Լիբիա, Ասիա և Եվրոպա»:

համտե Թեոն, Էջ 116՝

Եւ զյաղագս Թերսիտեայն. —

«Լեպեշտի էր և սրագլուի և կաղ
ի միոջէ ստանէ»¹.

Գ. Խորենացի, I, Ը Էջ 28—29՝

«Եւ քաղաք Թագաւորութեան տայ նմա [Վաղարշակայ] զՄծբին, և սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարեւմտեայ Ասորոց և զՊաղեստին և զՍաբա և զամենայն Միջերկրեայս և զԹեոսալիս, ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին՝ ուր կաւկաս յարեւմտեանն յանգի ի ծով, և զԱտրբպատական. «և այլ որչափ միտք քո և քաջութիւն հասանիցեն. զի սահմանք բազազ, ասէ, զէնն իւրեանց, որքան հասանէ՝ այնքան ունի».

համտե Թեոն, Էջ 40՝

«Եւ ևս Լակոնացի այր հարցեալ որումն զնա՝ ո՞ւր գտահմանս երկրին ունին Լակեղեմովնացիքն՝ եցոյց զնիզական».

Նույնն ունի նաև Պիտոյից գիրքը, Էջ 350՝

«ԶԼակոնացի ոմն հարցեալ, թէ ո՞ւր սահմանք Սպարտաց. և նորա զնիզական ցցեալ ասէ, Յնյամ վայրի»:

Խորենացու աղբյուրը մեջ բերված յերկրորդ և յերրորդ հատվածների նկատմամբ կարող է, ինչպես տեսնում ենք, վիճելի լինել, վորովհետև Խորենացին կարող էր ուզոված լինել, իրապես, Վնչ թե Թեոնից, այլ Նոննոսից և Պիտոյից գրքից: Միանշամայն անտարակուսելի յե սակայն, վոր վերոհիշյալ առաջին հատվածը քաղված է Թեոնի հայերեն թարգմանությունից: Խալաթյանցի կարծիքը (տես Армян-

¹ Հակոսակ Բաումգարտների յենթագրության Խալաթյանցը (Армянские Аршакиды в „истории Армении“ Моисей Хоренского, Москва 1903, էջ 238) Խորենացու պատմության սղբյուր է համարում Թերսիտեայն վերաբերյալ Նոննոսի հետևյալ հատվածը՝ «Հոմերոս ի ներքս մուծանէ զայր ոմն Թերսիտէս, որ էր կաղ, և ինք աշաք, կորովի և լեպեշտի, իրկ և սրագլուի, և յառաջախաւս» (տես Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, Marburg 1903, էջ 72):

ские Аршакиды, էջ 16), վոր այդ հատվածը Խորենացին վերցրել է Պրոկոպիոսից (De bello Goth. IV, 6), ավելի քան անհավանական է, վորովհետև այս վերջինի վկայությունը զգալի տարբերություններ ունի Խորենացու հատվածից, վորը գրեթե բառ առ բառ համապատասխանում է Թեոնի հայերեն թարգմանության վերևի մեջբերումին:

20. Խորենացին հետևող է, ինչպես հայտնի յե, պատմագրության հետտրական ուղղության և նրա պատմության վորոշ մասերը, գլխավորապես, ներբողները, պարսավները և նամակները գրված են Պիտոյից գրքի կանոններով (համտե Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ 1901, էջ 429—433): Հետտրական արվեստի հիմնական ձեռնարկը, վորից նա մեծ չափով ոգտված է յեղել Պիտոյից գիրքն է, անշուշտ, վորն իններորդ դարում վերստին խմբագրել ու վերամշակել էր հենց ինքը Խորենացին (տես «Խորենացու առեղծուածի լուծումը» իմ ուսումնասիրության մեջ՝ էջ 158—172):

Բացի Պիտոյից գրքից Խորենացին, ինչպես պարզվում է այժմ, ունեցել է իր ձեռքի տակ նաև Թեոնի հայերեն թարգմանությունը, վորի ճարտասանական ցուցումները ևս առաջնորդող ուղեցույցներ են յեղել հետտրական ուղղությամբ գրված նրա պատմության: Որինակ՝ Խորենացին իր պատմության մեջ հաճախ շեշտում է կամ ակնարկում, վոր պատմագրության ու պատմական փաստերի ու նկարագրությունների գլխավոր արժանիքներն են նրանց «հաւաստիութիւն»-ը, «համառոտութիւն»-ը և «հաւանութիւն»-ը:

Ուշագրության արժանի յեն այդ տեսակետից «Հայոց պատմութեան» հետևյալ վկայությունները.

ա. Խորենացի, I, Ա, էջ 7 (Տիգրիս 1913)՝

